ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1918-1924 ԹԹ.)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

Հայ որբերի հիմնախնդիրներին Կ. Պոլսի «Ճակատամարտն» անդրադառնում էր «Վերապրողները», «Գաւառի ձայներ» և «Հայկական կեանք» խորագրերի ներքո, ինչպես նաև «Մեր խօսքը» վերնագրով խմբագրականներում: Թերթը գրում էր, որ 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո թուրքական տիրապետության տակ գտնվող հայությունը կրկին օրենքից դուրս էր համարվում ճիշտ այնպես, ինչպես զինադադարին նախորդող 5 տարվա ընթացքում: «Ճակատամարտը» պահանջում էր պետական միջոցներով լուծել հայ գաղթականների և որբերի խնդիրներն այնքան ժամանակ, մինչև որ նրանք ոտքի կկանգնեին ու կվերակազմավորվեին[1]: Կ. Պոլսում և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայկական կայացած գաղթօջախներում գործող ազգային կառույցները պիտի զբաղվեին հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրներով՝ հա-մատեղ մշակված ծրագրերով ու ռազմավարությամբ[2]:

1918 թ. դեկտեմբերի 21-ին «Ճակատամարտը» տեղեկացնում էր թուրքական իշխանությունների այն կարգադրության մասին, ըստ որի՝ թուրքերի և քրդերի տներում պահված հայ որբերի և հարեմներում գտնվող հայ կանանց հետագա ճակատագիրը պիտի որոշեր թուրք ոստիկանությունը[3]: Երբ հարազատները կամ հայ համայնքի ներկայացուցիչները երկար փնտրտուքերից հետո որևէ թուրքի տանը հայտնաբերում էին թաքցված կամ թրքացված հայ որբուկի և ոստիկաններից պահանջում էին նրան վերադարձնել, վերջինները «հայ տղեկ մը չյանձնելու համար ամեն պատրուակ կը ստեղծեին»[4]: Նրանք իբրև թե քննում էին երեխայի հայ կամ քրիստոնյա լինելը: Թերթը չէր վստահում քննությունը վարելու նրանց մեթոդներին ու ձևերին: Փաստերի հիման վրա նաև պնդում էր, որ իսլամացված ու թրքացված հայ որբերի, աղջիկների ու կանանց՝ իրենց համայնքին վերադարձնելու գործը ոստիկանությունը ձգձգում էր, և նրանք հիմնականում մնում էին ավազակաբարո թուրքերի կամ քրդերի մոտ՝ «ենթակայ անոնց բոլոր քմահաճոյքներուն կամ բարբարոսութեանց»[5]: Հայ որբերին գտնելու և հավաքելու գործը բավական բարդ էր: Թուրքերի մոտ փակի տակ պահվող հայ փոքրիկներին կարելի էր կորսված համարել, որովհետև նրանք, ամենայն հավանականությամբ, պիտի մոռացած լինեին

---

[1] *Վերադարձող տարագիրները և տասանորդի տուրքը (Ճակատամարտ, 1919, № 232):*

[2] *Որոշումը չի բավեր (նույն տեղում, 1918, № 16):*

[3] *Երկու գաղտնիք (նույն տեղում, 1918, № 27):*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

ազգային և ընտանեկան սովորությունները, մայրենի լեզուն[6]: Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ էր մտածված գործել, այլապես գերու կարգավիճակում գտնվող հայորդիների «շունչն անգամ» չէր հասնելու նրանց փնտրող ազգակիցներին[7]: Հայ որբերին փնտրելու, ցուցակագրելու, նրանց գտնվելու հասցեները ճշտելու գործով, ըստ թերթի, պետք է զբաղվեր հայ համայնքի կողմից այդ նպատակով ստեղծվելիք ընդհանուր մարմինը, և ոչ թե դա պիտի արվեր ցաքուցրիվ ուժերով[8]:

1922 թ. «Ճակատամարտը» ռեպորտաժների շարք էր սկսել, որոնք ամփոփված էին «Ինչպե՞ս կապրին մեր որբերը» խորագրի ներքո: Դրանցից մեկում, օրինակ, Վազգեն Շիրակունին ներկայացնում էր Գուլելիի հայկական որբանոցի վիճակը[9]: Այստեղ ապրում էին 930 հայ երեխա և 25 ուսուցիչ[10]: Որբանոցին հատկացրել էին Գուլելիի նախկին զինվորական վարժարանի շենքը: «Ի՜նչ տխուր է պատկերը, կարելի չէ առանց վրդովումի և կսկիծի դիտել այդ բազմութիւնը, որ կատարեալ թշուառութեան պատկեր մը կը ներկայացնէ»[11], - գրում էր թերթի թղթակիցը: Նրա խոսքով՝ որբերը դեղնած դեմքեր ունեին, բայց դա ոչ թե ցրտից էր, այլ «զգալի էր, որ անոնք կը ծիւրին»[12]: Շատերը ոտաբոբիկ էին, հագնված մուրացիկների պես: Այդպիսով՝ որբանոցի ընդհանուր մթնոլորտը թղթակցին մեկ անգամ ևս համոզել էր, որ պետական և ազգային մարմիններն աչքաթող էին արել հայ որբուկներին: Աղտոտ ցնցոտիներն էին ծածկում նրանց կմախքացած մարմինները: Նրանք քնում էին խարխուլ մահճակալների վրա կամ դրանց կողքին՝ հատակին շարված խոտե «անկողիններում»: «Տղոց վերմակները չուլեր են, որոնք կը գործածուին ախոռները՝ ձիերը ծածկելու համար: Անկողինները խոտեր են, բայց փտած են թէ՛ վրայի չուլը և թէ՛ ներսի խոտը»[13]: Անկողինների մեջ ոջիլն էր վխտում[14]: Այս որբանոցում սնունդը անորակ էր և անբավարար քանակով: Հիմնականում տալիս էին հացով թեյ ու ձիթապտուղ, շաբաթը մեկ անգամ՝ մսով ճաշ: «Տղաքը երբեմն անօթի կը մնան, բացարձակ իմաստով, և կերակուր չեն ուտեր, որովհետեւ ուտուելիք բան չըլլար»[15], - կարդում ենք թերթում: Որբերը, սակայն, ըմբոնումով էին մոտենում տիրող կացությանը. «Մենք ոեւէ դժգոհութիւն չենք յայտներ՝ նկատելով, որ եթէ դրամ ըլլայ,

---

[6] *Շորդերը փրկելու համար (նույն տեղում, 1918, № 16):*
[7] *Նույն տեղում:*
[8] *Նույն տեղում:*
[9] *Քանի մը ժամ կեդր. որբանոցին մեջ (նույն տեղում, 1922, № 963):*
[10] *Նույն տեղում:*
[11] *Նույն տեղում:*
[12] *Նույն տեղում:*
[13] *Նույն տեղում:*
[14] *Նույն տեղում:*
[15] *Նույն տեղում:*

անշուշտ, մեզի ալ լաւ կը նային»[16]: Որբանոցի տնօրինությունը նույնպես դա էր նշում՝ ակնկալելով ըմբռնում, որովհետև խնայողության ռեժիմով էր աշխատում: Ննջասենյակները և դասարանները դեկտեմբերի վերջին էին սկսել «քալօրիֆէրով» տաքացնել, ընդ որում՝ դասարանների պատուհաններն ապակի չունեին[17]: Աշակերտները դժգոհում էին տնօրենի պահվածքից, որը միայն իր սենյակն էր տաքացնում և միշտ խրախուսում էր ուսուցիչների կոպիտ վերաբերմունքն աշակերտների նկատմամբ. «Ծեծը գլխաւոր միջոցն է եղած կարգ-կանոնը հաստատելու»[18]: Իր ռեպորտաժը Վ. Շիրակունին ավարտում էր որբանոցի տնօրենին ուղղված կոչով, որ նա բարելավեր որբերի կենսապայմանները: Հույս էր հայտնում, թե գալու էր այն օրը, երբ որբերն այլևս սենյակների պատերին չէին գրելու՝ սոված ենք[19]:

«Ճակատամարտում» ռեպորտաժ կար Էսայան կամ Բերայի որբանոցից[20]: Այստեղ բնակվող 90 որբերի կենսապայմանները համեմատաբար տանելի էին: Երեխաները բոլորն էլ առողջ էին, կայտառ ու աշխույժ, կոկիկ, մաքուր և կրում էին նոր հագուստներ: Որբանոցը տեղակայված էր Կեդրոնականի և Էսայանի միացյալ գիշերօթիկ վարժարանի մասնաշենքում[21]: 10X12 քառ. տարածությամբ միակ ննջարանում քնում էին 10-19 տարեկան որբեր: Նրանց միակ դասասենյակը բաժանել էին մի շարք փոքր «անկյունների», որոնցում անցկացվում էին դասեր տարբեր տարիքային խմբերի համար: Թերթի թղթակցուհին՝ Տաթևիկը, առաջարկում էր որբանոցը դուրս բերել վարժարանի շենքից և թաղային բյուջեի միջոցներով որբանոցի համար կառուցել նոր շինություն[22]:

Որբանոցի սաները քնում էին ընդհանուր ննջարանում, որտեղ 90 մահճակալ խիտ-խիտ դրված էին իրար կողքի այնպես, որ անհնար էր տեղաշարժվել: Որբերին կերակրում էին որոշակի սննդակարգով: Նրանց տալիս էին բարձրորակ հաց, ընդեղեն, յուղով, մսով բանջարեղեն, չամիչ, չոր սալորով խոշաբ: Որբանոցի տնօրինուհու կարծիքով՝ Բերայի որբանոցին պակասում էր որբ աշակերտների և ուսուցիչների միջև անհրաժեշտ ներքին կապը[23]:

Վազգեն Շիրակունու պրպտումները մի ուրիշ անգամ նրան տարան Պեշիկթաշի որբանոց[24], որ գտնվում էր Պեշիկթաշի՝ հայ գաղթականներին ու որբերին

---

[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում:
[20] Էսայան որբանոց (նույն տեղում, 1922, № 980):
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:
[24] Պեշիկթաշի կայանին և որբանոցին մեջ (նույն տեղում, 1922, № 985):

տրամադրված ժամանակավոր կացարանի կողքի երկհարկանի շենքում[25]: Այնտեղ ապրող 168 որբուհիների ննջարանները մաքուր էին և հարդարված: Անկողիններն ունեին ճերմակ ծածկոցներ, թեպետ առանց փոխնորդի: «Այնպէս որ, մինչեւ լուացուիլը սանուհիները խոտի վրայ կը մնան»[26]: Երկու սենյակ ծառայում էին որպես բուժկետ: Նշենք, որ մի քանի աղջիկ բորոտությամբ էին տառապում, և նրանց առանձին սենյակ էին տրամադրել շենքի ներքնահարկում[27]: Որբանոցի ամսական ծախսը կազմում էր 1250 ոսկի[28]: Որբերին տրվում էր բավարար քանակությամբ սնունդ: Նրանք ամեն օր սպիտակ հաց էին ուտում. «Հացը կը կտրուի և մէջտեղ կը դրուի, ինչպէս կ'ըլլայ տուներու մէջ, փոխանակ կշիռքով տալու»[29]: Որբուհիների կրթության հարցերը դրված էին ամուր հիմքերի վրա: «Պէշիկթաշի որբանոցը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն կը թողու այցելողին վրայ»[30], - այս խոսքերով էր ավարտվում ռեպորտաժը:

Կարո Գևորգյանի ռեպորտաժը Գատրգյուղի ազգային որբանոցի մասին էր[31]: Այն Կ. Պոլսում բացված հայկական որբանոցների մեջ ամենաբարվոք վիճակում էր: Դա պայմանավորված էր այդ թաղի հայության բարեկեցիկ կենցաղով: Որբանոցը տեղավորված էր Արամյան վարժարանի մոտ կառուցված եռահարկ շինության մեջ: Այդտեղ հավաքված էին միայն տղաներ: 6-17 տարեկան այդ 106 որբերն իրենց կրթությունը ստանում էին Արամյան վարժա-րանում: Երկուսին մեկ դասագիրք էր հատկացվում: Կայտառ ու կարմրաթուշ էին նրանք. «Բոլորի երեսին գոհունակութեան ժպիտ մը կը ցոլայ: Երջանիկ կը թուին և իրաւունք ալ ունին, որովհետեւ որբանոցը օժտուած է երախաներուն պահանջները գոհացնող բոլոր յարմարութիւններով»[32]: Երեխաների ննջարանը գտնվում էր շենքի վերնահարկի լուսավոր և ընդարձակ սրահում: Յուրաքանչյուրը քնում էր իր մահճակալին, սավանով ծածկված խոտե անկողնին: Տրված էր 2 ձեռք սպիտակեղեն, որը փոխում էին շաբաթը մեկ անգամ: Պահպանվող մաքրության շնորհիվ որբերը զերծ էին մնում մակաբույծ միջատներից և մաշկային հիվանդություններից: Ընդհանուր առմամբ՝ որբանոցի բյուջեն կազմում էր 10-11.000 ոսկի, որը կրկնապատկվում էր Ամերիկյան նպաստամատույցի կողմից[33]:

---

[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում:
[31] Գատրգյուղի ազգային որբանոց (նույն տեղում, 1922, № 1001):
[32] Նույն տեղում:
[33] Նույն տեղում:

«Ճակատամարտը» հայ գործարարներին կամ գործատուներին առաջարկում էր իրենց շահույթից որբախնամ և տարագրելոց մարմիններին ամսական կոնկրետ գումար հատկացնել, իսկ օրավարձու աշխատողներին դիմում էր խնդրանքով, որ նրանք էլ հնարավորության դեպքում նույն նպատակով նվիրաբերեին իրենց ստացած մեկ կամ մի քանի օրվա վարձատրությունը[34]: Ընտանիքներին, գիշերօթիկ դպրոցներին ու հասարակական հաստատություններին էլ առաջարկ էր անում ամսվա մեկ կիրակի օրվա ճաշի համար նախատեսած գումարը փոխանցել Որբախնամին և Տարագրելոց մարմիններին[35]: Թերթի էջերում Տարագրելոց կենտրոնական հանձնաժողովը «ստիպողական» կոչով դիմում էր թաղական խորհուրդներին, հայկական թերթերի վարչություններին, հայկական թաղերում կազմված և հանուն տարագրյալների հանգանակություն կատարած բոլոր մարմիններին, որ իրենց ձեռքում գտնվող այդ գումարները փոխանցեին Օսմանյան բանկի Ղալաթիայի կենտրոնի և Տարագրելոց կենտրոնական հանձնաժողովի հաշվեհամարներին[36]:

Թերթը ցեղասպանությունը վերապրած հայ գաղթականների և որբերի խնդիրները լուծելու արդյունավետ գործիք էր համարում Ազգային գերագույն մարմնի կամ Ազգային խորհրդի ստեղծումը[37]: Դրա մեջ պիտի մտնեին հայոց բոլոր կազմակերպությունների, միությունների, դասերի և խավերի ներկայացուցիչները[38]:

Արևմտահայոց պատրիարք Զավեն Եղիայանի նախաձեռնությամբ ստեղծված Որբախնամ, Տարագրելոց, Նպաստամատույց և այլ հանձնախմբերն ու Հայ կարմիր խաչն սկսում են օգնել ցեղասպանությունը վերապրածներին և տվյալներ հավաքել թուրքերի մոտ ապօրինաբար պահվող հայ կանանց ու որբերի մասին[39]: Պատրիարքարանը նրանց հայ համայնքին վերադարձնելու պահանջով դիմում էր իշխանություններին: Անտանտի ուժերի գործադրած ճնշման հետևանքով օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը 1919 թ. փետրվարի 5-ին հրաման էր ուղարկել գավառներ, որով պահանջում էր «մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»[40]: Զավեն պատրիարքը և ազգային կառույցները փորձում էին այդ հրամանը կյանքի կոչել, թեև

---

[34] *Խոսքը առանց գործի մեղայլ է (նույն տեղում, 1918, № 12):*

[35] *Նույն տեղում:*

[36] *Ստիպողական կոչ (նույն տեղում, 1918, № 32):*

[37] *Ազգային խորհուրդ (նույն տեղում, 1919, № 38):*

[38] *Նույն տեղում:*

[39] *1919 թ. փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային խնամատարությունը, որը մասնա-ճյուղեր էր հիմնել Կ. Պոլսի բոլոր թաղերում և բացել էր գաղթականների կայաններ ու որբանոցներ: Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային կարմիր խաչին (տե՛ս* **Զաւէն արք.,** *Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 280):*

[40] **Մելքոնյան Ռ.,** *Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Ե., 2010, էջ 65:*

հասկանում էին, որ դա իրականում կեղծիք է: «Ճակատամարտը» գրում էր, որ թեև Ֆերիտ փաշայի օրոք թուրքական կառավարությունը արտաքին ճնշումների ազդեցության տակ հայտարարությունով դիմել էր իսլամ ազգաբնակչությանը՝ հայ համայնքին հանձնելու իսլամացված հայ որբերին, բայց պարզ էր, որ «կառավարութիւնը չ'ուզէր յանձնել իսլամացուած հայ որբերը»[41]: Այդ հայտարարություն-հրամանն այնպես էր շարադրված, որ յուրաքանչյուր թուրք կարող էր ըմբռնել դրա բուն էությունը, այն է՝ «անշուշտ որ չէք յանձներ»[42]: Օրաթերթը վկայում էր, որ թուրքերը հայ մանուկների հոգիներն այնպես էին թունավորել, որ կամ քույրն էր եղբորն ասում, թե ինքը հայ չէ, կամ՝ հակառակը: Հարյուրավոր որբուկներ փոքր էին եղել և չէին հիշում իրենց հայ լինելու հանգամանքը: Բազմաթիվ որբեր էլ սպառնալիքի տակ ուրանում էին իրենց ազգությունը[43]:

1922 թ. հունիսի 2-ի՝ Ազգային պատվիրակության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ 1918 թ. Մուդրոսի զինադադարից մինչև 1921 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսում հավաքվել էր 1.536.157 օսմանյան ոսկի որբերի և տարագրյալների համար[44]: Մինչև 1922 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքության և նրա ջանքերով ստեղծված հանձնախմբերի աշխատանքի շնորհիվ բռնի ձուլումից փրկվել և հայ համայնքին են վերադարձ-վել հազարավոր հայ որբեր և առևանգված ու բռնի իսլամացված կանայք և աղջիկներ: Մասնավորապես, Առաքել Չաքրյանի գլխա-վորությամբ գործող Որբահավաք մարմինը 1919 թ. մայիսից 1921թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում «Չեզոք տուն» կոչվող կառույցի հետ «Պոլսոյ մէջ գտնուած գրեթէ 4-5000 որբերէն 3000-ը ազատեր է թուրքերու քովէն»[45]: Գավառներում գտնվող հայ որբերի մեծամասնությունը «մնաց թուրքերուն ձեռքը. Հարիւր հազարաւոր որբերէն շատ քիչերը կարելի եղաւ ազատել»[46]: Պատրիարքարանը 1921 թ. սկզբներին զեկույցի տեսքով ամփոփել է իր Որբախնամ և Որբափրկիչ ծրագրերի արդյունքները՝ նշելով, որ 63.000 հայ որբեր դեռևս մնում էին մուսուլմանական ընտանիքներում[47]: «Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ 1922 թ. դրությամբ 25.000 հայ որբ կար ԱՄՆ-ում, 400-ը՝ Գերմանիայում, 15.000-ը՝ Հունաստանում, 400-ը՝ Հռոմում, 200-ը՝ Ռումինիայում, 1000-ը՝ Բուլղարիայում, 5000-ը՝ Սիրիայում, 40.000-ը՝ Խորհրդային Հայաստանում[48]:

---

[41] *Թրքական քաղաքականությունը հայոց հանդեպ (Ճակատամարտ, 1920, № 346):*
[42] *Նույն տեղում:*
[43] *Նույն տեղում:*
[44] **Զաւէն արք.,** *նշվ. աշխ., էջ 282-283:*
[45] *Նույն տեղում, էջ 292:*
[46] *Նույն տեղում:*
[47] **Մելքոնյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 66:*
[48] *Ճակատամարտ, 1922, - 1330:*

Օրաթերթը հայ գաղթականության և որբերի հիմնախնդիրներին անդրադարձել է մեկ այլ կտրվածքով ևս: Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներն ապաստան էին փնտրում հարևան երկրներում (հիմնականում Ռուսաստանում և Սիրիայում-Հ. Մ.), իսկ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրումից հետո նրանց մեծ մասը համախմբվում է փրկված ու անկախ հայրենիքում: Նրանք հուսով էին, որ շուտով վերադառնալու էին Էրգիր՝ իրենց ծննդավայրը: Սակայն մինչ այդ փորձում էին գոյատևել Հայաստանում, որտեղ տիրում էր սովը, և չկային ապրուստի ու կեցության տարրական պայմաններ: Այդուհանդերձ, հայոց անկախ պետությունը հնարավորության սահմաններում անում էր ամեն ինչ՝ հայ գաղթականների և որբերի կյանքը փրկելու, նրանց կացարանի և գոյատևման հիմնահարցերը լուծելու համար: «Ճակատամարտը» առավելապես «Կեանքը Հայաստանի մէջ» խորագրի ներքո էր ներկայացնում Հայաստանի Առաջին հանրապետության կողմից իրականացվող որբախնամ աշխատանքները, գաղթականներին տեղավորելուն և նրանց խնդիրները լուծելուն վերաբերող հարցերը: Օրինակ՝ «Սով կա» հոդվածում Թիֆլիսի թերթերից արված լրաքաղով կարելի էր պատկերացնել, թե ինչ տիտանական ջանքեր էր գործադրում Հայաստանի կառավարությունը գաղթականներին տեղավորելու, ներգաղթի և պարենավորման հիմնահարցերը վերացնելու ուղղությամբ[49]: Դա անում էր մի երկիր, «որից կտրուած էին բոլոր հացառատ վայրերը, որ ինքը քաղցած լինելով, կերակրում էր կէս միլիոնի հասնող գաղթականների հսկայական բանակ»[50]:

Թերթը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առաջարկում էր թուրքական իշխանություններից պահանջել հայ գաղթականներին իրենց ծննդավայրը վերադառնալու հնարավորություն և իրավունք տալ[51], թեև հասկանալի էր, որ դա իրատեսական չէր:

Հայաստանին տնտեսական օժանդակություն էր հատկացնում Ամերիկյան նպաստամատույց ընկերությունը: Այն հանձն էր առել՝

- հայ որբերի խնամատարությունը,
- հայ որբերի և գաղթականների համար արհեստանոցների կազմակերպումը,
- պարենավորման գործընթացը՝ սննդամթերքը բաշխելու աշխատանքը հանձնելով Հայաստանի խնամատարության նախարարությանը, որը պետք է կատարեր նաև սերմացուի բաշխումը[52]:

Ամերիկյան նպաստամատույց ընկերությունն ստանձնել էր 1500 հայ որբերի խնամատարության գործը[53]: Հայաստանում նշված ժամանակահատվածում

---

[49] Սով կա (նույն տեղում, 1918, № 8):

[50] Նույն տեղում:

[51] Նույն տեղում:

[52] Նույն տեղում:

հաշվառված էին 45.000-50.000 տեղաբնակ ու գաղթական որբեր, «որոնք կը կարօտին անմիջական խնամատարութեան»[54], - այս մասին տեղեկացնում էր Վաղարշակ Հոխիկյանը 1919 թ. ապրիլի 6-ին Երևանից ուղարկած թղթակցության մեջ:

«Արեւմտահայ որբերը Հայաստանի Հանրապետութեան մէջ» հոդվածում Հ. Բագրունին, խորությամբ վերլուծելով հիմնախնդիրը, ներկայացնում էր առկա իրավիճակը՝ հիմնվելով բազմաթիվ փաստերի վրա[55]: Ըստ այդ դիտարկման՝ 1914 թ. դեկտեմբերին տեղի ունեցած Բագրևանդի, 1915 թ. հուլիսին Վասպուրականի և դրան հաջորդած ռուսական զորքի նահանջների, ինչպես և 1918 թ. Վանի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի և Մեծ Ղարաքիլիսայի կոտորածների հետևանքով որբացել էին բազմաթիվ երեխաներ, որոնց մեծ մասը հյուծվելով՝ ոչնչացավ, իսկ որոշ մասն էլ կառավարության ու հանրային զանազան հիմնարկությունների և միությունների նախաձեռնությամբ պատսպարվեց որբանոցներում[56]: «Պետութիւնը իր այդ աշխատանքին մէջ դեռ լիովին ի վիճակի չէ եղած փողոցներու մէջ թափառող եւ հիւծած ու մեռնելու դատապարտուած որբերը հաւաքելու: Կ'ենթադրուի, որ բոլոր որբերը պիտի հաւա-քուին ու 11 հազար թիւը 15-18 հազարի պիտի բարձրանայ, հաշուե-լով այդ թիւին մէջ ու 5000 հիւծածներն ու հիւանդները, որոնց բոլորին վրայ պետութիւնը ամսական 9 միլիոնի պիւտճէ մը կ'ունենայ կամ տարեկան 115 միլիոն՝ սնունդի եւ 10 միլիոն միանուագ գումար մըն ալ հագուստի ու կահաւորութեան»[57], - այս լավատեսական վերջաբանով էր հոդվածն ավարտում Հ. Բագրունին[58]:

«Ճակատամարտը» ազգային կառույցներին ու ողջ հայ ժողովրդին կոչ էր անում համախմբվել հայ որբերի և ընդհանրապես հայ գաղթականության խնդիրները լուծելու համար[59]: Արդեն 1922 թ. թերթը հիմնականում Խորհրդային Հայաստանում էր տեսնում որբերի և գաղթականների անվտանգ ապագան՝ գտնելով, որ արտասահմանյան երկրներում նրանց սպառնում է ուծացումը:

---

[53] Նույն տեղում:
[54] Նույն տեղում:
[55] Արևմտահայ որբերը Հայաստանի Հանրապետության մեջ (նույն տեղում, 1919, № 161):
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում:
[58] Նույն տեղում:
[59] Խոսքը առանց գործի մեռյալ է (նույն տեղում, 1918, № 12):

ПРОБЛЕМА АРМЯНСКИХ СИРОТ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ "ЧАКАТАМАРТ" (1918-1924 ГГ.)

ОВСЕПЯН М. В.

Резюме

Положение армянских сирот всегда было в центре вни-мания ежедневной газеты "Чакатамарт". Газета откликалась на проблемы сиротских домов Константинополя в 1918-1924 гг. Множество публикаций было посвящено актуальной для общества теме ассимиляции армянских сирот, которых вывозили за границу.

THE PROBLEM OF THE ARMENIAN ORPHANS IN "CHAKATAMART" NEWSPAPER (1918-1924)

M. HOVSEPYAN

Abstract

"Chakatamart" newspaper has focused its attention on the problems of the Armenian orphans. It has presented its work on orphan care in both Constantinople and in the First Republic of Armenia. Under the separate row the newspaper has rebounded to the problems and everyday life of the Armenian orphanages in Constantinople in 1918-1924. The newspaper was concerned especially with the fate of the Armenian orphans who had moved abroad, and "Chakatamart" believed that the danger of the assimilation would threaten them.